ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-78

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
vanik.virabyan@mail.ru

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ ՈՒԻԼՅԱՄ ՀԱՍԿԵԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1919–1920 ԹԹ.)*

Հիմնաբառեր. Հայաստանի Հանրապետություն, Դաշնակիցներ, Անտանտ, Գերագույն հանձնակատար-կոմիսար, Ուիլյամ Հասկել, տարածքային սահմանազատում, «Չեզոք գոտի»:

Այսպես կոչված **«մարդասեր» (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են)** ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելը[1] 1919 թ. հուլիսի 5-ից մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը հանդիսացել է Դաշնակիցների Գերագույն կոմիսարը Հայաստանի Հանրապետությունում՝ (Оганян 2010, Махмурян 2017, «Հայոց պատմության հարցեր», 49–75, Հովհաննիսյան 2014, Հատոր II, 231–244) փոխարինելով գեներալ Ջեյմս Հարբորդին: Ու. Հասկելի նստավայրը Թիֆլիսն էր: 1919 թ. հուլիսի 5-ին Դաշնակիցներն այդ առթիվ ընդունել են համապատասխան որոշում. «Սույն խորհրդի կողմից ԱՄՆ գնդապետ Ու. Ն. Հասկելը Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի ու Իտալիայի կառավարությունների անունից նշանակվում է Հայաստանում իբրև Բարձրագույն հանձնակատար՝ այն ըմբռնմամբ, որ գնդապետ Հասկելը միաժամանակ նշանակվում էր Հայաստանում գործող նպաստամատույց կազմակերպությունների ղեկավար» (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 66):

1919 թ. հուլիսի 5-ին ԱՄՆ պետքարտուղար Ռ. Լանսինգի կողմից մտցված և այսպես կոչված «Հինգի խորհրդի» ընդունած բանաձևում ասվում էր. «Գնդապետ Ու. Ն. Հասկելը (ԱՄՆ), այս Խորհրդի կողմից նշանակվում է Հայաստանում իբրև Գերագույն կոմիսար՝ հանուն Միացյալ նահանգների, բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների: Այդ ենթադրում է, որ գնդապետ Հաս-

* Ստացվել է 26.12.2022թ., ուղարկվել է գրախոսման 12.01.2023թ., ընդունվել է տպագրության 07.07.2023թ.: Տպագրվում է Գիտության Պետական Կոմիտեի Պայմանագրային (Թեմատիկ) Հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917–1920 թթ.)» շրջանակում:

1 Ուիլյամ Նեֆյու Հասկել (1878–1952) – Հայաստանում զբաղվել է հիմնականում սննդի հայթայթման, մանկատուն-որբանոցների և հայ բնակչության համար աշխատատեղեր, արհեստանոցներ բացելու աշխատանքով: 1921թ. Ու.Հասկելը որպես Ամերիկյան Օգնության կոմիտեի դիրեկտոր եղել է Խորհրդային Ռուսաստանում, որի ժամանակ խորհրդային հատուկ ծառայությունները պարզել են, որ նա հանդիսանում է ԱՄՆ բանակի Գլխավոր շտաբի հետախուզության ռուսական բաժանմունքի պետը:

կելը, միաժամանակ, նշանակված է Հայաստանում կարգավորելու այն բոլոր գործող նպաստամատույց միջոցառումները, որ իրականացնում են այնտեղ գործող տարբեր կազմակերպությունները: Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների, բրիտանական, ֆրանսիական և իտալական բոլոր ներկայացուցիչները պետք է անմիջապես հրահանգ ստանան համագործակցելու գնդապետ Հասկելի հետ և աջակցեն նրան» (Հովհաննիսյան 2005, Հատոր I, 371): Այդ լիազորությունները գնդապետ Հասկելին տրվեցին ինչպես Կովկասյան Հայաստանի, այնպես էլ Թուրքահայաստանի համար: Սակայն նրա լիազորությունների չհրապարակմամբ կովկասյան քաղաքական շրջաններում ստեղծվեց համոզմունք, որ գնդապետ Հասկելին տրվել է ողջ Կովկասի գերագույն կոմիսարի պաշտոն: Այդ եզրույթից ելնելով, Հյուսիսային Կովկասի լեռնականների ներկայացուցիչները ևս նրան խնդրեցին իր վրա վրա վերցնել հաշտարարի դերը իրենց և գեներալ Անտոն Դենիկինի միջև: ԱՄՆ-ի կառավարությունը առանձին բավականություն չարտահայտեց Ու. Հասկելի լիազորությունների ընդարձակման հետ կապված: Բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունը հայկական կառավարությանը վստահեցրեց, որ բրիտանական զորքերը Հայաստանում անհրաժեշտ են, իսկ Ու. Հասկելի ժամանմանը վերաբերվեց սարկազմով, քանզի Ու. Հասկելն իր տրամադրության տակ ռազմական ուժ չուներ, առանց որի ոչ մի բանի չէր կարող հասնել: Դա էլ հանգեցրեց Ու. Հասկելի փաստական մեկուսացմանը, որը չէր օգտվում Դաշնակիցների մյուս առաքելությունների աջակցությունից:

1919 թ. ամռանը գնդապետ Ու. Հասկելի՝ որպես ԱՄՆ-ի և Դաշնակիցների միացյալ նպաստամատույցի կառավարիչ նշանակումով (Հովհաննիսյան 2005, Հատոր I, 155), հայ ժողովուրդը որոշակի պարենային և այլ օգնություն ստացավ: Թիֆլիսում Ամերիկյան Նպաստամատույց վարչության (ԱՆՎ) ղեկավար է նշանակվում մայոր Ջ. Գրինը, իսկ Երևանյան գրասենյակի տնօրեն (հուլիսի 11-ից)՝ մայոր Չ. Ս. Ֆորբսը, որի հետ առաջին իսկ օրից Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը քննարկում է հայկական բանակի 30 հազար զինվորների համար համազգեստ գնելու հարցը (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 304, մաս 1, թ. 13):

Այսպիսով, Խաղաղության վեհաժողովը Հայաստանին խնամակալ երկրի տրամադրման, ճշգրիտ սահմանների որոշման փոխարեն տվեց ռեզիդենտ-կոմիսար՝ խորհուրդների, հսկողության և մխիթարության համար, որի մասին գնդապետ Ու. Հասկելը հայտարարեց ՀՀ խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 22-ի նիստում. «**Քանի որ այդ պայմանագիրը** (Հաշտության վավերացումը – Վ. Վ.) **և Ազգերի լիգան չեն հաստատված, Հայաստանի մանդատի հարցը չի կարող քննության առարկա դառնալ**» (Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ 2009, 253):

Ու. Հասկելը, որի նշանակման մասին ծանուցեցին հուլիսի 9-ին, Անդրկովկասի բարդությունների հետ գործ ունենալու համար ոչ վարչարարական ունակություններ ուներ, ոչ էլ ուժեղ բնավորություն (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 67): Ընդհակառակը, դյուրագրգիռ, ամբարտավան և երբեմն խուճապի մատնվող այդ

մարդը մեծ խնդիրներ էր ստեղծում, որ նրանից դժգոհ է մնում նաև ծովակալ Մարկ Բրիստոլը (Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 69): ԱՄՆ պետքարտուղար Ռ. Լանսինգի կողմից Փարիզի ամերիկյան խաղաղության պատվիրակությանը ուղարկված 1919 թ. հուլիսի 11-ի հեռագրում հանձնարարվում էր Հայաստանում, Վրաստանում և Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի, Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների բոլոր ներկայացուցիչներին անհապաղ համագործակցել և աջակցել գնդապետ ՈՒ. Հասկելին, որը գործելու էր որպես Պետդեպարտամենտի ներկայացուցիչ, ցանկալի համարելով, որ նաև պայմանավորվածություն ձեռք բերվի նախարար Ն. Բեքքերի հետ Հասկելին այդ պաշտոնում երկարաժամկետ նշանակելու մասին (Армения в документах Государственного департамента США 2012, 154–155):

Ադրբեջանցի պատմաբան Բ. Նաջաֆովի կարծիքով՝ Ու. Հասկելն իր վրա դրված առաքելությանը բավականաչափ լուրջ վերաբերվեց և չնայած հայերի ամեն տեսակ մանևրումներին, բողոքներին և պահանջներին, ընդհանուր առմամբ օբյեկտիվ դիրքորոշում դրսևորեց. «Ես չեմ հանդիսանում հայերի դատապաշտպանը և իմ խնդիրն է՝ չթույլատրել ազգամիջյան բախումներ Անդրկովկասում: Ես միատեսակ լավ եմ վերաբերվում բոլոր հանրապետություններին» (Наджафов 1994, 84): Բ. Նաջաֆովի եզրահանգմամբ՝ Ու. Հասկելի ծրագրի համաձայն Ղարաբաղը և Զանգեզուրը (վիճելի տարածքներ) պետք է կառավարվեին Ադրբեջանի կողմից, իսկ Նախիջևանի, Շարուրի և Դարալյագյազի գավառները ներառվեին այսպես կոչված «Զեզոք գոտում»՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի ընդհանուր ղեկավարությամբ, սակայն պայմանով, որ տեղական կառավարումը գտնվեր ադրբեջանական իշխանությունների ձեռքին: Բ. Նաջաֆովի պնդմամբ, բնականաբար, ամերիկյան Գերագույն կոմիսարի այդպիսի դիրքորոշումը հայ ազգայնականների քիմքով չեղավ, որոնք սկզբում Ու. Հասկելի առաջ շողոքորթում էին, հետագայում սկսեցին նրան մեղադրել ոչ օբյեկտիվության մեջ, որին հաջորդեց խառնաշփոթը և անորոշությունը հայերի գործողություններում՝ Փարիզի Խաղաղության վեհաժողովում (Наджафов 1994, 84, «Азербайджан» 1919, N 184, 31 августа):

Իր հերթին Է. Իսմաիլովը նշում է, որ Հայաստանը փորձեց ԱՄՆ-ի օգնությամբ իրականացնել իր տարածքային պահանջները Ադրբեջանի նկատմամբ, սակայն 1919 թ. օգոստոսի վերջին Բաքվում ընթացած բանակցությունների ժամանակ Ու. Հասկելը հայտարարեց Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանի անքակտելի մասեր ճանաչելու մասին՝ միևնույն ժամանակ առաջարկելով նախկին Երևանի նահանգի, Նախիջևանի և Շարուր–Դարալյագյազի շրջանների հարավային մասում ստեղծել «Զեզոք գոտի» ամերիկյան գեներալ-նահանգապետի ղեկավարությամբ, և արդեն 1919 թ. հոկտեմբերի 24-ին հայտարարեց գեներալ-նահանգապետության ստեղծման և գնդապետ Էդմունդ Դեյլիին «Զեզոք գոտի» նահանգապետ նշանակելու մասին: Է. Իսմայիլովի պնդմամբ, այդուհանդերձ, Ադրբեջանի կառավարության կտրուկ հակազդեցության և Նախիջևանի բնակչության սուր բողոքների արդյունքում ամերիկացիների մտահղացումը չհաջողվեց, և այդ պահից գնդապետ Է. Դեյլին Նախիջևանում ընդունվեց ոչ թե որ-

պես նահանգապետ, այլ որպես Փարիզի վեհաժողովի ներկայացուցիչ, իսկ 1919 թ. նոյեմբերին ԱՄՆ առաջարկը՝ Ու. Հասկելի առաքելության լիազորությունները տարածելու նաև Ադրբեջանի վրա, արգելափակվեց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի պատվիրակությունների կողմից նույն Փարիզի վեհաժողովում (Исмаилов 2010, 243):

Եվ այսպես, 1919 թ. օգոստոսի 2-ին ժամանելով Կ. Պոլիս և զրույց ունենալով պատրիարք Ձավեն Եսայանի հետ, Ու. Հասկելը խոստանում է մեղմացնել տառապյալ հայերի վիճակը, իսկ օգոստոսի 5-ին նա խնդրանքով դիմում է Կ. Պոլսում Դաշնակիցների հրամանատար Ֆրանշե դը Էսպերիին՝ բողոք հայտնելով բրիտանացիների՝ Անդրկովկասից հեռանալու հետ կապված, թե «հայերի ոչնչացումը կանխելու համար, ինչպես նաև՝ Անդրկովկասից համընդհանուր անարխիայի կանխարգելման համար, բավարար քանակով Դաշնակցային զորքերի ներկայությունը միանգամայն անհրաժեշտ է» (Ованнисян 2007, 167):

Կարծես թե սկիզբը հուսադրող էր: Հասկելը միջնորդագիր է ուղարկում Հերբերտ Հուվերին և Փարիզի Խաղաղության վեհաժողովին՝ անհրաժեշտ համարելով բրիտանացիներին համոզելու՝ մնալ Անդրկովկասում (Ованнисян 2007, 167, Հովհաննիսյան 2014, Հատոր II, 133), սակայն անարդյունք, քանզի օգոստոսի 11-ին Արթուր Բալֆուրը տեղեկացնում է, որ բրիտանական զորքերը Անդրկովկասից տարհանելու որոշումն անխուսափելի է: Հարկ է նշել, որ բրիտանացիների որդեգրած այս դիրքորոշումը իր պերճախոս արտացոլանքն է գտել հունիսին Բաթում, Թիֆլիս և Բաքու այցելած փոխծովակալ, թուրքամոլ Մ. Բրիստոլի եզրահանգման մեջ. «Փաստ է, որ Կովկասի, այսպես կոչված, Հանրապետությունները (Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը) կատարյալ խեղկատակություն են: Կառավարության անդամները ոչ թե ժողովրդին են ներկայացնում, այլ գաղտնի ընկերությունների դրածոներն են, որոնք տարիներ շարունակ վարժեցվել են խարդավանքների և խաբեությունների: Շատ քիչ բացառություններով դրանք վստահելի չեն և ընդհանուր առմամբ, չարաշահում են իրենց պաշտոնները: Կովկասում տիրող այս դրությունը ակնառու օրինակն է այն բանի, թե ինչ կպատահի Թուրքիայի մնացած մասի հետ, եթե այն բաժանվի մանր պետությունների» (Հովհաննիսյան 2005, հատոր I, 361):

Ռուբենը նշում է. «Ճանապարհի վրայ նստած վրացիները ցանկութիւն ունէին բացարձակ չթույլատրել փոխադրութիւնները. Թէև նրանց վրայ կը ճնշէին Դաշնակիցների ներկայացուցիչ Հասկէլը և ուրիշներ... բայց Վրաստանը կարողացաւ այնքան դժուարութիւններ յարուցանել, որ փոխանակ միլիոնաւոր փութ հաց և այլ նիւթեր ստանալու, գուցէ 100.000-ի չհասաւ ուտելիքի մեր ստացածը (որից 30.000-ից աւելին՝ սերմնացու, Հասկէլի միջոցով): Ստիպուած էր Հայաստանը, իրեն խոստուացած կամ գնած հացահատիկները հասցնելու համար, տալ վրացիներին եւ կաշառք, եւ տոկոս բերածից, երբեմն 50 հարիւրի չափ» (Ռուբէն 1982, Է հատոր, 260 -261):

Իրավիճակը տագնապալի էր, որը հասկանում էր նաև Երևանում Ադրբեջանի գլխավոր լրտեսը՝ դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին, որը 1919 թ. օգոստոսի 1-ին գրում է. «Այժմ ամենահարմար ժամանակն է, Հայաստանի կոմի-

սար ամերիկյան գնդապետ Հասկելի գալուց հետո ուշ կլինի: Հարձակումը կազմակերպեցեք առանց պատերազմ հայտարարելու» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 14–15): 1919 թ. օգոստոսի 3-ին Ադրբեջանի կառավարությանը զեկուցելով դեպի Դիլիջան, Նոր Բայազետ ու Բասարգեչար 8 բեռնատարներով հրետանի ու արկեր ուղարկելու և այդ շրջաններում 4-րդ գնդի գտնվելու մասին՝ նա եզրակացնում էր. «Հայերը այդ նախապատրաստում են մուսուլմանների դեմ» և պահանջում էր «ձեռք առնել հարկ եղած միջոցները» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 15):

1919 թ. օգոստոսի 15-ին ժամանելով Թիֆլիս (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 81) և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանի և ռազմական կցորդ, գեներալ Հովսեփ Քիշմիշյանի հետ հանդիպումների («Նոր աշխատավոր» 1919, 16 օգոստոսի, «Борьба» 1919, 16 августа, 17 августа, 21 августа) ու ֆրանսիական և բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ նախնական քննարկումների արդյունքում, Ու. Հասկելը հասկացավ Հայաստանի ռազմական թուլությունը և ինքնապաշտպանության համար անհրաժեշտ զենք-զինամթերքի կարիքը: 1919 թ. օգոստոսի 19-ին Դաշնակիցների Գերագույն խորհրդին ներկայացված հաշվետվության մեջ Ու. Հասկելը փաստել էր. «Բանակի ուղարկումը Հայաստան խիստ անհրաժեշտ է, ինչը, բնակչությանը կփրկի կործանումից» (Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281):

Օգոստոսի 21-ին Ալ. Խատիսյանի և Երևանի պարետ Արշավիր Շահխաթունու պատվո պահակախմբի ուղեկցությամբ Ու. Հասկելը ժամանում է Երևան, որը զարդարված էր ամերիկյան և հայկական դրոշներով, և ջերմ դիմավորության արժանանում ժողովրդի կողմից (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 232), և որը հույսեր էր փայփայում և փրկության ելք («Նոր աշխատավոր» 1919, 26 օգոստոսի, «Հայրենիք» 1919, 23 նոյեմբերի, Վրացեան 1928, 274): Նույն օրը ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի հետ ունեցած զրույցում Ու. Հասկելը հայտարարում է «Հայաստանի առկա սահմանները պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու» մտադրության մասին, և որ Փարիզի Խաղաղության վեհաժողովը հանձնարարել է իր վրա վերցնել հայ ժողովրդի ներքին և արտաքին ապահովությունը, նրա պարենավորումը և ներգաղթի անվտանգությունը (Армения в документах Государственного департамента США 2012, 193–194, ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1–3, 7–8): Ու. Հասկելը ՀՀ վարչապետին տեղեկացնում է, որ ինքը «Վեհաժողովից հանձնարարական ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնվեն՝ Հայաստանում, Ազրբեջանում, Թուրքիայում, թե Վրաստանում, որ զինվորական օգնություն առայժմ չի կարող լինել, բայց արդեն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապես զորք հասցնել Հայաստան, այլև անգլիական զորքերի մի մասը թողնել Հայաստանում: Ինքը ամեն միջոց ձեռք կառնե պաշտպանելու Հայաստանի սահմանները և կպահանջի, որ Ազրբեջանի կառավարությունը վերջ տա գրգռիչ գործունեությունը Հայաստանի մուսուլմանների մեջ: Ձեռք կառնի նաև կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանա զենք ու ռազմամթերք և որ վրաց կառավարությունը արգելք չլինի նրանց փոխադրությանը: Մասնավորապես, կաշխատի ապահովել Հայաստանի պարենավորման գործն ու մթերքի հայթայթումը» (Վրացյան 1993, 320–321):

ՀՀ վարչապետի հետ զրույցում Գերագույն հանձնակատարը նաև նշում է, որ

ծրագրում է նպաստել Երևանին ռազմական հանդերձանք (փամփուշտ, հրացան) ստանալու և վրաց կառավարության վրա ազդելու՝ այն իր ճանապարհներով անցկացնելու հարցում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 370, թ. 1): Ու. Հասկելը Ալ. Խատիսյանին հայտնում է, որ արդեն ռազմական օժանդակության հարցով դիմել է Փարիզ, որտեղ դեռ պետք է որոշվեն Միացյալ Հայաստանի սահմանները և որի հետ կապված հարցերը և ռազմական իրադրությունը հետազոտելու համար ժամանելու է գեներալ Ջ. Հարբորդը, և խորհուրդ տալիս մինչև խաղաղության պայմանագիրը միայն պաշտպանական բնույթի գործողություններ ձեռնարկել՝ մինչև հարցի վերջնական կարգավորումը, միաժամանակ խոստանալով Ադրբեջանի կառավարությանը զգուշացնել սադրալից քայլերի համար («Նոր աշխատավոր» 1919, 26 օգոստոսի, 27 օգոստոսի, Վրացեան 1928, 274–275):

1919 թ. օգոստոսի 22-ին, նորանշանակ Հայաստանի գերագույն կոմիսարը ներկա է գտնվում ՀՀ խորհրդարանի նիստին: Նախագահող Հովսեփ Արղությանը ողջունում է նրան ջերմ խոսքերով: Ու. Հասկելը խորհրդարանում հանդես է գալիս տպավորիչ և հայերին հուսադրող ճառով. «Ես երջանիկ եմ, որ գտնվում եմ այստեղ և հնարավորություն ունեմ ձեզ հետ խոսելու... Կասկած չկա, որ Հայաստանը զինվորական օգնություն կստանա ոչ թե նրա համար, որ գործի Վրաստանի կամ Ադրբեջանի դեմ, այլ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները: Այդ զորքերով կապահովվի համենայնդեպս Հայաստանի ժամանակավորապես որոշված սահմանները: Եկա այն եզրակացության, որ Հայաստանին անհրաժեշտ է զինվորական օգնություն, և բրիտանական զորքերը պետք է մնան Անդրկովկասում, քանի դեռ նրանց չեն փոխարինել դաշնակիցներից մեկնումեկի զորքերը: Երբ Կ. Պոլսում ես իմացա Անդրկովկասից բրիտանական զորքերը դուրս տանելու կարգադրության մասին, անմիջապես արտահայտեցի իմ բողոքը Հաշտության կոնֆերենցիային: Բայց եթե նույնիսկ բրիտանական զորքերը թողնեն Անդրկովկասը, մենք կգտնենք բավական հզոր մի զորք՝ փոխարինելու նրանց: Հայաստանի պարենավորման և ֆինանսական տեսակետից, ինչպես և հագուստի կողմից բավարարելու համար, արված են համապատասխան կարգադրություններ: Անկասկած է այն հանգամանքը, որ Ադրբեջանը խախտել է բրիտանական կառավարության կողմից որոշված սահմանները: Այս երևույթը պարտավորեցնում է ինձ գնալ Թիֆլիս, ապա Բաքու, նախազգուշացնելու համար Ադրբեջանին, որ եթե նա միջոցների չդիմի արդեն կատարված փաստերի դեմ և չդադարեցնի պատերազմական գործողությունները, այդ ոչ միայն լուրջ հետևանքներ կունենա Ադրբեջանի համար, այլև անձնական պատասխանատվության կենթարկվեն Ադրբեջանի կառավարության անդամները: Թիֆլիսում ես կխորհրդակցեմ անգլիական հրամանատարության հետ՝ Հայաստանին անմիջապես զինվորական օգնություն ցույց տալու մասին» (Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները 2009, 252–252, «Նոր Աշխատավոր» 1919, 27 օգոստոսի): Ու. Հասկելը որոշել էր հայտագիր հանձնել Բաքվի իշխանություններին զավթողականության և Հայաստանի մահմեդականներին գրգռելու համար՝ ամբողջ պատասխանատվությունը դնելով Ադրբեջանի վրա (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 370, թ. 1, Հայոց պատմության հարցեր 2017, Հատոր 18, 49–75):

Ու. Հասկելից լուրջ ակնկալիքներ կային որպես դաշնակցի, և այդ առումով հատկանշական է 1919 թ. օգոստոսի 23-ի խորհրդարանի նիստում նախագահող Հովսեփ Արղությանի ելույթը, որում վերջինս նշել է, որ Դաշնակիցները պարտավորություն են զգում Հայաստանը պաշտպանելու խնդրում, որպեսզի ապացուցեն, որ Հայաստանը մենակ չէ, և որ հայ ժողովուրդը իր զինուժով հինգ տարի ծառայել է նրանց («Նոր աշխատավոր» 1919, 27 օգոստոսի, «Հայրենիք» 1919, 21 հոկտեմբերի): Ի պատասխան Ու. Հասկելը հանդես է գալիս հուսադրող խոսքերով, ասելով, որ Հայաստանի մանդատի հարցը հազիվ թե լուծվի մինչև Վերսալի պայմանագրի և Ազգերի լիգայի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշման հստակեցումը, և որ ինքն արդեն քայլեր է ձեռնարկել Բաթումից մթերքի անխափան հոսքը ապահովելու և բրիտանական ուժերը Անդրկովկասում պահպանելու կամ էլ դաշնակիցների այլ ուժեր այստեղ բերելու համար (Վրացեան 1928, 275–276, «Հայրենիք», 1919, 2 հոկտեմբերի, «Борьба», 1919, 28 августа):

Փարիզի Խաղաղության կոնֆերանսի նախագահ Ժորժ Կլեմանսոյին ուղղված 1919 թ. օգոստոսի 27-ի հեռագրում Ու. Հասկելը տեղեկացնելով, որ ինքն անձամբ ուսումնասիրել է իրավիճակը Հայաստանում և այն համարելով աննկարագրելիորեն ծանր, գտնում էր, որ օգնությունը կարիքավորներին պետք է ժամանակին հասնի, որպեսզի կանխվի սովը: Միաժամանակ գտնում էր, որ իրեն որպես աջակցություն ուղարկվեն զորքեր, առաջին հերթին՝ հեծելազոր, և որ մեկ ուժեղացված ամերիկյան հետևակային բրիգադին հավասարազոր ուժերը կփրկեն դրությունը Հայաստանում՝ ընդգծելով, որ թաթարները հարձակումներ են գործում արևելքում և հարավում, որտեղ թեկուզ մեկ գնդի ժամանումը կարող է վճռել դաշնակից հայերի ճակատագիրը, քանի որ նրանց կարող են ոչնչացնել ցանկացած պահի, եթե զորքերը չշտապեն (Армения в документах Государственного департамента США 2012, 200):

Սարկազմով արտահայտվելով Ու. Հասկելի մասին, որը փոփոխամիտ էր իր գործելակերպում, բրիտանացիները ներքուստ լավ հասկանում էին, որ նա առանց ռազմական օժանդակության որևիցե լուրջ խնդրում, առավել ևս ՀՀ համար կարևորագույն տարածքային սահմանազատման հարցում, ոչ մի էական արդյունքի չի կարող հասնել: Միաժամանակ իրենք էլ, Անդրկովկաս ժամանելով, հակվեցին դեպի Ադրբեջանը և մուսուլմանական աշխարհը, որին կուլ գնաց նաև Ու. Հասկելը:

Այս առումով դիպուկ է գեներալ Ա. Դենիկինը. «Հայկական գործիչները, թրծված չլինելով համաշխարհային դիվանագիտության քաղաքական խաղում և վատ տեղեկացված լինելով, չէին հասկանում, որ Անտանտի մեջ չկա և որևիցե մեկ պետություն, որը ցանկանա հայերի համար արյուն թափել, որ բարեգործական միսիային զուգընթաց հայտնված ամերիկյան գնդապետ Հասկելը՝ Հայաստանում Անտանտի Գերագույն կոմիսարը, ժամանեց լայն լիազորություններով և նախօրոք վճռված որոշմամբ՝ **ոչ մի ամերիկյան զինվոր չուղարկել Հայաստան: «Ամերիկայի բարոյական կերպարը» պետք է կասեցներ արյունահեղությունը Մերձավոր Արևելքի ռազմատենչ երկրներում, որտեղ միայն ուժն էր իր նկատմամբ հարգանք, վախ և հնազանդություն ներշնչում»** (Деникин 2002, Т. 4, 317): Դա լավ էր հասկացել բրիտանական բանակի գեներալ Բրիգսը, երբ վերջինս

1919 թ. ապրիլին մեկնում է Թիֆլիս Վրաստանի կողմից բանակցելու Կամավորական բանակի հրամանատարության հետ՝ Սոչիի շրջանից վրացական զորքերի դուրսբերման շուրջ: Բախվելով վրաց գործիչների անզիջողականության հետ, գեներալը վերջիններիս հանդիմանում է. **«Անգլիացիները և իտալացիները կգնան, սակայն Ռուսաստանը հավերժ կմնա, և բարեկամական հարաբերությունները նրա հետ լավագույնը կլինի, որ կարող է լինել… Խաղաղության կոնֆերանսը կավարտվի, Ռուսաստանն էլ կդառնա մեծ և հզոր և դուք նախապատրաստեք ձեզ ավելի բարենպաստ ապագայի համար»** (Деникин 2002, Т. 4, 323):

1919 թ. կեսերին դեռ պարզ չէր, թե ինչ նոր տերեր են ժամանելու Անդրկովկաս: Այդ նույն ժամանակ բրիտանացիները սկսում են հեռանալ տարածաշրջանից՝ մնալով միայն Բաթումում, և անդրկովկասյան ռազմաքաղաքական և դիվանագիտական միջավայրը նոր տագնապներում է հայտնվում: Սեպտեմբերի վերջին բրիտանական բանակի կապիտան Գուլսը հայտարարում է, որ Լոնդոնից ստացված կարգադրությամբ, իրենք այլևս իրավունք չունեն խառնվել Լոռու «Չեզոք գոտու» գործերին, և որ այդուհետ այն գտնվելու է Ու. Հասկելի իրավասության տակ (Туманян 2012, 199), իսկ վերջինս Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչներին հրավիրում է քննարկելու և լուծելու վիճելի հարցերը: ՀՀ կառավարությունը չէր կիսում Ու. Հասկելի դիրքորոշումը «Չեզոք գոտու» հարցում և գտնում էր, որ սահմանային-տարածքային հարցերը պետք է դիտարկվեն և լուծվեն մեկ փաթեթով: Կողմերին բավարարում է միայն Ու. Հասկելի հանձնարարականը՝ «Չեզոք գոտու» հսկողությունը հանձնել իր աշխատակից փոխգնդապետ Չարլզ Լիվինգսթոնին՝ որպես նահանգապետ, որը փոխարինում է կապիտան Դուգլասին (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 187–188):

1919 թ. օգոստոսի 23-ին Ու. Հասկելը շտապ մեկնում է Թիֆլիս, իսկ օգոստոսի 29-ին ժամանելով Բաքու՝ լավ տպավորություն է ստանում Ադրբեջանի վարչապետ Նասիբ բեկ Ուսուբբեկովից և արտգործնախարար Մամեդ Յուսիֆ Ջաֆարովից և վերջիններս տեղեկացնում, որ ինքը եկել է ոչ թե իբրև Հայկական հարցի, այլ իբրև մարդասիրական օգնության և խաղաղ համագոյակցության պաշտպան՝ մինչև հարցի քաղաքական կարգավորումը, և որպեսզի վերջ տրվի թե՛ մեկ, և թե՛ մյուս կողմից սադրանքներին և մահմեդական ու հայ բնակչության տառապանքներին, առաջարկում է Երևանի նահանգի հարավային շրջաններում ամերիկյան վերահսկողությամբ ստեղծել «չեզոք գոտի» («Նոր աշխատավոր» 1919, 1 սեպտեմբերի, «Азербайджан» 1919, 30 августа–5 сентября): Ու. Հասկելի այս առաջարկն եղավ մեկ շաբաթ անց այն օրից, երբ գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը պարտադրեց հայերին ճանաչել իր իշխանությունը Ղարաբաղ-Զանգեզուրում: Սա մի վտանգ էր, որը թուլացրեց Շարուր-Նախիջևանի նկատմամբ հայերի պահանջները, բարդացրեց Հայաստանի Հանրապետության մուտքը դեպի Զանգեզուր՝ Ադրբեջանին հնարավորություն տալով ծավալվել Արաքսի հովտում այնպես, ինչպես 2020 թ. աշնանը՝ 44-օրյա պատերազմի ժամանակ: Պարզ էր, որ Ն. բեկ Ուսուբբեկովին դա դուր եկավ և նա բանավոր համաձայնություն տվեց Ու. Հասկելի առաջարկած 21 հոդվածներից բաղկացած նախագծին, որով մեջտեղ եկավ «**Չեզոք գոտի**» խորագիրը կրող մի համաձայնագիր, որը հակասում էր Եր-

կանում հայերին տված խոստումներին՝ առանց ՀՀ կառավարության հետ խորհրդակցելու:

Ըստ համաձայնագրի՝ **«Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում անհապաղ պետք է հաստատվեր «չեզոք գոտի», որի կառավարումը պետք է իրականացներ գնդապետ Ու. Հասկելի կողմից նշանակված ընդհանուր գեներալ-նահանգապետը**: Երրորդ հոդվածով կազմակերպվում էր տեղական իշխանություն, որը պետք է լիներ թաթարական՝ բացառությամբ այն շրջանների, որտեղ հայերը կազմում էին մեծամասնություն:

4. Հայկական և ադրբեջանական կառավարություններն իրենց զորքերն անմիջապես պետք է դուրս հանեին «չեզոք գոտուց», ընդ որում, ոչ մի զինվորական միավորում չպետք է հետ վերադառնար:

5. Հայկական և ադրբեջանական կառավարությունները «չեզոք գոտուց» անհապաղ հետ էին կանչում իրենց և այլ երկրների գործակալներին, որոնք կարող էին հրահրել տեղական բնակչությանը:

6. Ադրբեջանը և Հայաստանը հայտարարելու էին համընդհանուր համաներում, որը տարածվելու էր մինչև 1919 թ. սեպտեմբերի 1-ը մասնավոր անձանց դեմ կատարված հանցագործությունների վրա: Համաներումը չէր տարածվում այն հանցագործությունների վրա, որոնք արդեն գտնվում էին բրիտանական ռազմական իշխանությունների տնօրինության տակ:

7. «Չեզոք գոտում», տեղական պաշտոնատար անձինք կարող էին նշանակվել միայն ամերիկացի գեներալ-նահանգապետի կողմից:

Պայմանագրի 8-րդ և 9-րդ հոդվածներում նշվում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է գործադրեին իրենց ողջ ազդեցությունը հանգստացնելու համար հայ և թաթար ազգաբնակչությանը՝ «չեզոք գոտում», Երևանի և Զանգեզուր գավառներում:

10. Հայաստանի, և՛ Ադրբեջանի կառավարություններն իրենց հովանու տակ պետք է առնեին իրենց տարածքներում ապրող հայերի և թաթարների կյանքը և գույքը:

11-րդ հոդվածով անհապաղ վերականգնվելու էր Երևանից դեպի պարսկական սահմանը ձգվող և Շարուր-Դարալագյազով անցնող երկաթուղին և հեռագիրը, որը պետք է անմիջապես գործեր հայ ու թաթար անձնակազմով և լիներ ամերիկյան գեներալ-նահանգապետի հսկողության տակ, թեպետ համարվելու էր հայկական երկաթուղու մաս՝ հայ և թաթար անձնակազմով: Երկաթուղին պետք է սպասարկեր բնակչությանն առանց ազգային խտրության:

12-րդ հոդվածով Ադրբեջանի կառավարությունը համաձայնում էր ամեն կերպ դյուրացնել ամերիկյան նպաստամատույց՝ «**Near East Relief**» ընկերության պարենավորման և սնունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակչությանը:

13. Ադրբեջանական կառավարությունը համաձայն էր իրականացնել բոլոր միջոցները և տրամադրել փոխադրության ծախսերը Ադրբեջանում գտնվող բոլոր

այն հայ գաղթականների վերադարձի համար, որոնց վերադարձը գեներալ-նահանգապետը կհամարեր անհրաժեշտ:

14. Փոքր Վեդիի մահմեդական ազգաբնակչությունը ամերիկյան նահանգապետի ցուցումով պետք է այդ գյուղից վերաբնակեցվեր «չեզոք գոտում» տարածքում նրանց համար նախատեսվող մեկ այլ գյուղում՝ հնարավորություն տալով իրենց հետ տեղափոխել իրենց ողջ ունեցվածքը:

15-րդ հոդվածով Բաքու–Ջուլֆա կառուցվող երկաթգիծը պետք է գտնվեր բացառապես Ադրբեջանի կառավարության տնօրինության ներքո և ոչ ոք չպետք է խառնվեր նրա կառուցման գործին:

16-րդ հոդվածով երկաթգծի երկայնքով Հայաստանի և «չեզոք գոտում» սահմանը պետք է լիներ այն տեղը, որը կոչվում էր Գայլի Դրունք:

17-ից 21-րդ հոդվածները վերաբերում էին կառավարման համար հատկացվող հարկերի գանձման միջոցներին, անհրաժեշտության դեպքում ադրբեջանական կառավարության կողմից նախատեսվող ֆինանսական օժանդակությանը, դպրոցների, եկեղեցիների ամենօրյա գործունեության վերականգնմանը, խղճի ազատության հաստատմանը և «*Near East Relief*»-ի կողմից առանց ազգային խտրականության պարենային օգնության տրամադրմանը (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 11, թ. 19–24, 46–47շրջ., 51, «Բանբեր Հայաստանի Արխիվների» 1993, N 1–2, 116–119: 168.am, 30 օգոստոսի: Հարությունյան Ա, Բալյան Ա 2021, 59–72):

Այսպիսով, «Հայաստանի գերագույն կոմիսար» գնդապետ Ու. Հասկելը, ընդառաջելով ադրբեջանցիների պահանջատիրությանը, Շարուր-Դարալագյազ-Նախիջևանի շրջանները հայտարարում է վիճելի տարածքներ, ինչը փաստացի նշանակում էր, որ հայկական բնիկ տարածքները՝ Զանգեզուրը, Նախիջևանը, Ղարաբաղը և Շարուր-Դարալագյազը հանձնվում են Ադրբեջանին, հնարավորություն ստեղծելով առաջացող միջանցքով տիրել ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Արաքսի հովտին, ինչպես դա արեցին 2020 թ. 44-օրյա Արցախյան պատերազմի ժամանակ և ինչը փորձում են անել պատերազմից հետո:

Ու. Հասկելը Ադրբեջանի հրամցրած խաղաղասիրության խայծը ներկայացրեց Ալ. Խատիսյանին՝ համոզված լինելով, որ մերժելու տարբերակ չի լինի: Սակայն վերջինս միամտաբար կարծեց, թե Ու. Հասկելը մոլորեցվել է սահմանների և իրավիճակի անբավարար իմացության պատճառով, և որ դրանով Ադրբեջանը իշխող դիրք էր գրավում Արաքսի հովտի նկատմամբ և ձեռք բերում ընդարձակ միջանցք՝ փակելով Երևանի և Զանգեզուրի միջև հաղորդակցության միակ ուղին (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 236), ինչին մեր օրերում էլ է ձգտում:

Ու. Հասկելի որոշմամբ, 1919 թ. սեպտեմբերի 1-ին Նախիջևանն ու Շարուր-Դարալագյազը հայտարարվեցին որպես «Չեզոք գոտի»՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի գլխավորությամբ, որի մասին որոշումը, սակայն, չիրականացավ (Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281): Ու. Հասկելի նախագիծը միևնույն հարթության վրա էր դնում մի կողմից Երևանի նահանգը և մյուս կողմից՝ Զանգեզուր-Ղարաբաղը՝ դրանով իսկ կարծես թե հիմք ստեղծելով Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչման համար այդ տարածքների նկատմամբ այնպես, որ-

չափ ՀՀ ինքնիշխանության ճանաչման համար Երևանի նահանգի նկատմամբ (ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 193, թ. 2, 25, «Յառաջ» 1919, 7, 8, 21–22 հոկտեմբերի, Гаджиев 2004, 150–151): Այս կապակցությամբ «Борьба» վրացական թերթի 1919 թ. սեպտեմբերի 2-ի համարում տպագրված «Կովկաս. Գնդապետ Հասկելը. Անդրկովկասյան հանրապետությունների միջև փոխհարաբերությունները» հոդվածում Ու. Հասկելը գրել էր. «Անհրաժեշտ է, որ Ղարաբաղը, այդ թվում և Զանգեզուրը վերջնականապես անցնեն Ադրբեջանին, իսկ ինչ վերաբերում է Նախիջևանին, Շարուրին և Դարալագյազին, ապա այդ գոտին դառնա «Զեզոք գոտի»: Այդ գոտին պետք է կառավարվի հենց տեղական բնակչության կողմից՝ իր ընտրովի մարմինների միջոցով, վարչակարգի գլուխ պետք է կանգնի եվրոպական կամ ամերիկյան գեներալ-նահանգապետ» («Борьба» 1919, 2 сентября):

Ս. Վրացյանը գրում է. «Հասկանալի է այն զարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացվեց Ու. Հասկելի կարգադրությունը՝ «առանց դանդաղելու ստորագրել և հետ ուղարկել» պայմանագիրը: Չկամություն ու թշնամանք փնտրելը Ու. Հասկելի քայլի մեջ անտեղի էր, իհարկե, այնքան բաց էր կատարված խաղը: Մարդը պարզապես զոհ էր իր անգիտությանը ու դյուրահավատությանը և Բաքվում լարված մեքենայություններին: Նրան ամեն կողմից ներկայանում էին թուրք պատգամավորություններ՝ գանգատով ու բողոքով Հայաստանի իշխանության դեմ. Ազրբեջանի կառավարությունը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թվեր, և խեղճ մարդը չգիտեր՝ ու՞մ հավատալ, ի՞նչ անել» (Վրացյան 1993, 324):

Հարցի խիստ կարևորությունը Ալ. Խատիսյանին պարտադրեց 1919 թ. սեպտեմբերի 5-ին այն քննարկել ՀՅԴ բյուրոյի հետ և խորհրդարանին տեղեկացնել, որ զինադադարի վերաբերյալ Ու. Հասկելի կոչը և ամերիկյան նահանգապետության կազմավորումը սկզբունքորեն ընդունելի է, որի համար սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը կշտամբեց կառավարությանը Դաշնակիցներին կուրորեն հավատալու համար՝ նշելով, որ Կովկասում նրանք ոչ մի բան չեն արել հայ ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության համար, և որ «Զեզոք գոտու» առաջարկի ջատագովները պարզապես օգնում են խեղդել երիտասարդ հանրապետությունը: Քննադատելով, որ հավատացել են Հասկելին, նա իշխող կուսակցությանը կոչ արեց վերանայել արտաքին քաղաքականությունը, հրաժարվել արևմուտքի փարիսեցիությունից և դեմքը շրջել դեպի ռուսական դեմոկրատիան. «Ամբողջ մի տարվա դառը փորձերը ցույց տվին, որ մենք ոչ մի լավ բան սպասել չենք կարող արտաքին ուժերից: Ինչ տվին մեզ Դաշնակիցները, որոնց վրա հայ ժողովուրդը իր ամբողջ հույսն էր դրել: Մի շաբաթ առաջ գնդապետ Հասկելը խանդավառ ցույցերի առարկա էր դառել այս շենքում պառլամենտի և հայ ժողովրդի կողմից: Մի շաբաթ առաջ այս ամբիոնից հայտարարեց՝ իրեն համար կասկածից դուրս է, որ Ադրբեջանի կառավարությունը խախտել է Հայաստանի սահմանների վերաբերմամբ Անգլիայից ստացած հրահանգները, որ վերջին բոլոր դեպքերի հեղինակը Ադրբեջանն է և խոստացավ անձնական պատասխանատվության կանչել վերջինիս կառավարությանը: Սակայն մի շաբաթից հետո այցելելով Բաքու և առանց նույնիսկ Երևան վերադառնալու և մեր կառավարութ-

յան կարծիքը լսելու, նստած Թիֆլիսում ուղարկում է Հայաստանի կառավարությանն ի գործողություն այնպիսի հրահանգներ, որոնցից պարզ երևում է, որ այդ պատասխանատվությունն այժմ նա ձգում է Հայաստանի կառավարության վրա: Ինչ տվին մեզ այս տարվա ընթացքում իրար հետևից Հայաստան եկող Դաշնակիցները՝ չեզոք զոնաների (գոտիների – Վ. Վ.) այդ սիրահարները: Եկան անգլիացիք և հազիվ երկու շաբաթ անց՝ ստեղծեցին չեզոք հողաշերտեր մեր և Վրաստանի միջև, եկավ ամերիկացին, որ նշանակված է Հայաստանի Գերագույն կոմիսար և նրա առաջին խոսքը եղավ նոր չեզոք հողաշերտերի մասին: Ինչ է առաջարկում այժմ մեզ գնդապետ Հասկելը. ստեղծել մի շարք չեզոք հողաշերտեր մեր և մեր հարևանների միջև, որ այսպիսով 4 կողմից օղակված Հայաստանի պաշարումը լրիվ դառնա: Ժամանակն է վերջապես հիմնական վերաքննության ենթարկել մեր արտաքին քաղաքականությունը» (Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները 2009, 260–261, Հովհաննիսյան 2014, Հատոր II, 237):

Դաշնակցականների մի մասը ևս դժգոհ է մնում, ուստի առաջարկվում է խորհրդակցել Ու. Հասկելի հետ, որից հետո կառավարությանը լիազորում է կայացնել վերջնական որոշում: Ավելին, որպեսզի Ա. Խոնդկարյանի քննադատության հիմնական մասի հետ իրենց համերաշխությունը հանրայնացվի, դաշնակցականների ջանքերով այն հայտնվում է «Հայաստանի աշխատավոր», «Յառաջ» և «Աշխատավոր» թերթերի էջերում, որոնցում շեշտվում էր, թե Հայաստանի թշնամիները կողմնակից են «Չեզոք գոտու» առաջացմանը, որպեսզի մնան 1919 թ. հունիսին թուրքերի կողմից ՀՀ-ին պարտադրած սահմանները, որ Ու. Հասկելը հնարավոր է մեկ այլ «չեզոք գոտի» էլ ստեղծի Կարսի մարզում՝ տուրք տալով մահմեդական բեկերի և գործակալների ցանկությանը («Նոր աշխատավոր» 1919, 11 սեպտեմբերի, «Հայրենիք» 1919, 23 նոյեմբերի):

Ու. Հասկելի գրությունը քննարկվում է ՀՀ խորհրդարանում ու կառավարության 1919 թ. սեպտեմբերի 3-ի և 6-ի նիստերում՝ որոշելով մի հանձնախումբ գործուղել Ու. Հասկելի մոտ՝ պարզելու եղելությունը (Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 119–121): Կարելի է կարծել, որ այս առումով Ու. Հասկելը ոչ թե պարզամիտ մոլորության մեջ էր ընկել ադրբեջանցիների կողմից, այլ որոշակի դիտավորությամբ նախընտրելի էր համարել Ադրբեջանին՝ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հանձնակատար Լևոն Եվանգուլյանին խնդրելով թերթերում չհրապարակել իր ճառերն ու կարծիքները (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 175, թ. 55) :

1919 թ. սեպտեմբերի 6-ին Ալ. Խատիսյանը Ռ. Տեր-Մինասյանի հետ խնդրի պարզաբանման նպատակով մեկնում են Թիֆլիս, որտեղ սեպտեմբերի 6-ից 14-ը վարչապետը վեց հանդիպում է ունենում նախագծի հեղինակի առաջարկությամբ այնտեղ ժամանած Ն. բեկ Ռուսբբեկովի հետ՝ բացատրություններ ստանալու, պայմանով, որ

1) Շարուր-Նախիջևանը բրիտանական զինվորական իշխանությունների կողմից ընդունվի որպես Հայաստանի մաս, որով իրենք կհարգեն հասկելյան առաջարկը՝ համաձայնելով ամերիկյան նահանգապետության գաղափարին, անհեթեթություն համարել «չեզոք գոտում» Դարալյագյազի ընդգրկումը, և որ Ադր-

բեջանը խախտել է Փարիզի Խաղաղության վեհաժողովի հրահանգները՝ ցանկանալով առանց որևիցե պայմանի երկաթուղի անցկացնել Զանգեզուրից Նախիջևան:

2) Զանգեզուրը եղել է և պետք է մնա Հայաստանի մաս, որն ընդունվել է գեներալ Ջ. Ն. Քորիի կողմից, սակայն խախտվել՝ Ուսուբբեկովի կողմից, իսկ «չեզոք գոտի» անվանումը փոխարինել «ամերիկյան ընդհանուր նահանգապետություն» անվանումով («Նոր աշխատավոր» 1919, 10 սեպտեմբերի):

Ն. բեկ Ուսուբբեկովի պնդմամբ՝ մահմեդական բնակչությունը պետք է մնար զինված, իսկ նահանգապետը զրկվեր պաշտոնյաներին արձակելու իրավունքից: Բաքուն իր վրա էր ամրագրում մինչև Ջուլֆա կառուցվելիք երկաթգծի մենաշնորհը, որի փոխարեն ընդունում էր Հայաստանի Հանրապետության գերիշխանությունը Դարալագյազում (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 90 շրջ.): Բանակցությունների ընթացքում Ու. Հասկելն ամբողջությամբ ընդունում է Հայաստանի Հանրապետության տեսակետն ու իր ցանկը մինչև ինը կետ կրճատում: Վերջնական համարվող տեսքով ամերիկյան գոտին ընդգրկում էր միայն Շարուր-Նախիջևանը, վարչական բոլոր ծախսերը կատարում էր ԱՄՆ-ը կամ մարում էին համատեղ: Վեդիի բնակչությունը պետք է զինաթափվեր, իսկ Ջուլֆա տանող երկաթուղու շինարարությունը պետք է համաձայնեցվեր Հայաստանի Հանրապետության հետ առանձին պայմանագրով: Երկուստեք քննարկումների ժամանակ Ու. Հասկելը հաստատում է Զանգեզուրի միանշանակ հայկական երկրամաս լինելը» (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 90 շրջ.):

Այսպիսով, ինչպես և ադրբեջանցիների պարագայում, Ու. Հասկելը մասամբ ընդունելի համարելով հայերի առաջարկները, դրանով փորձում է Ադրբեջանի վրա ազդել, սակայն Ն. բեկ Ուսուբբեկովն անդրդվելի է մնում ադրբեջանական տարադրամի օգտագործման և Բաքու–Ալիաթ–Ջուլֆա երկաթգծի հարցում, գտնելով, որ ամերիկյան նահանգապետը ընդամենը պետք է լինի արտաքին վերահսկիչի դերում, իսկ Դարալագյազի հարցում անորոշ զիջման է գնում, որով հարցը մնում է բաց: Չցանկանալով մեղադրվել նախագծի տապալման մեջ, Ադրբեջանի կառավարությունը ստանձնում է հաշվենկատ դիտորդի դեր՝ հասկանալով, որ առանց զինուժի և առանց իրենց համաձայնության չի համարձակվի մուսուլմանաբնակ երկրամասում նահանգապետություն հաստատել:

Ակնհայտ էր խաղարկումը թե՛ ադրբեջանական, և թե՛ հայկական կողմի հետ, չնայած Ալ. Խատիսյանը սեպտեմբերի 14-ին վերադառնալով Երևան՝ զեկուցում է, թե Ու. Հասկելը նկատել է առաջարկի թերությունները (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 239): Ու. Հասկելի փոփոխականությանն իրատեսական գնահատական չտրվեց, Անդրկովկասում գտնվելու ընդամենը երեք շաբաթվա ընթացքում նա հասցնում է երեք անգամ փոխել իր դիրքորոշումը՝ մի բան ասել Երևանում, մեկ այլ բան՝ Բաքվում, իսկ Թիֆլիսում էլ հրաժարվել արդեն իր իսկ ստորագրած պայմանագրի մի մասից, և ստացվում էր, որ Ու. Հասկելի ստորագրությունը գրոշի արժեք չուներ: Փորձելով բացատրել Հասկելի վարքագիծը, վարչապետ Ս. Վրացյանը գրել է. «Այսպիսով, «Հայաստանի Գերագույն կոմիսարը» Ղարաբաղ–Զանգեզուրն էլ տալիս էր Ազրբեջանին: Ու հասկանալի էր այն զար-

մանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացվեց Հասկելի կարգադրությունը՝ **«առանց դանդաղելու ստորագրել և հետ ուղարկել» պայմանագիրը»**: Չկամություն ու թշնամանք փնտրելը Հասկելի քայլի մեջ՝ անտեղի էր, իհարկե, այնքան բաց էր կատարված խաղը: Մարդը պարզապես զոհ էր իր անգիտության ու դյուրահավատության և Բաքվում լարված մեքենայություններին: Ազրբեջանի կառավարությունը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թվեր, և խեղճ մարդը չգիտեր՝ ու՞մ հավատալ, ի՞նչ անել... Միաժամանակ պահանջում էին կազմել «մի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներից»՝ քննելու համար «հայ ավազակ դաշնակցականների կատարած բռնությունները Երևանի վիլայեթի (նահանգի – Վ. Վ.) ազրբեջանցիների դեմ... Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդեին Հասկելի վրա, որը ո՛չ ծանոթ էր կովկասյան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժությունն ունեցող անգլիացու խորագիտությամբ էր օժտված» (Վրացյան 1993, 324–325):

Ստացվում էր, որ Ու. Հասկելի վարքագիծը նույն «բրիտանական հեռատեսությունն էր գաղութների կառավարման գործում»: Փոխվում էին միայն երաժիշտները, իսկ երաժշտությունը նույնն էր, հին ինչպես աշխարհը՝ «բաժանի՛ր, որ տիրես»: Տալ խոստումներ, որոնք չեն կատարվելու, զույգ օրերին խոստումներ տալ հայերին, կենտ օրերին՝ ադրբեջանցիներին, որով և հասկանալի է դառնում Ու. Հասկելի ռազմավարությունը, որ նա ընդամենը իր կառավարության կամքի արտահայտիչն էր, որի համար հայերը պետք է շնորհակալ լինեին «հայասեր» Վուդրո Վիլսոնին: Ու. Հասկելը պարզապես բրիտանացիների հակառուսական քաղաքականության շարունակողն էր Անդրկովկասից բրիտանացիների մեկնումից հետո, որը լավ բնութագրել է Հայաստանի Հանրապետությունում Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդապետ Միխայիլ Ջինկևիչը. «Հասկելը պահանջում էր Հայաստանի կառավարությունից, որ նա հարաբերություններ չունենար Գլխավոր հրամանատարի (Ա. Դենիկինի – Վ. Վ.) հետ՝ շրջանցելով իրեն: Բացի այդ, այն դեպքերում, երբ ամերիկացիները տեսնում էին համակրանքի դրսևորումներ Ռուսաստանի նկատմամբ, նրանք համոզում էին հայերին, որ Ռուսաստանն այլևս երբեք չի դառնա մեծ տերություն և այդ իսկ պատճառով նրա վրա օգնության առումով չի կարելի հույս դնել» (Деникин 2002, Т. 4 , 320):

1919 թ. սեպտեմբերի 12-ին Ալ. Խատիսյանը Ջոն Ուորդրոպի[2] հետ զրույցում դժգոհել էր, որ դաշնակիցների հապաղումը հայերին օգնելու առումով նվազեցրել է նրանց հեղինակությունը: Հասկելի՝ որպես Դաշնակիցների գերագույն կոմիսարի առումով մեծ կասկածներ էին առաջացել, ակնհայտ էր դարձել, որն առանց զինուժի որևիցե բան անել չէր կարող, մուսուլմանների վրա թողնելով անվնաս ամերիկյան միսիոների տպավորություն (Ованнисян Р. 2007, 196):

Օգտվելով Ու. Հասկելի թողտվությունից, վեջինիս թվացյալ «ճիշտ» առաջարկները մահմեդականները թողնում են օդում կախված, և դեռ ավելին՝ պատաս-

2 Ուորդրոպ Ջոն Օլիվեր – 1919–1921 թթ. եղել է բրիտանական Գերագույն կոմիսարը Անդրկովկասում:

խանում են դավադիր կոչերով և գործողություններով, չնայած գնդապետ Ջեյմս Ռեյը 1919 թ. սեպտեմբերի 16-ին Նախիջևանի Մահմեդական խորհրդին իրազեկում է ամերիկյան նահանգապետին ենթարկվելու անհրաժեշտության մասին՝ ասելով, թե արդեն գնդապետ Էդ. Դեյլիին առաջարկվել է նահանգապետ, և որ ինքը շտապ մեկնում է Բաքու՝ արագացնելու վերջինիս նշանակումը, ապա մեկնելու է Երևան՝ ամերիկացի մի քանի պաշտոնյաների և Թիֆլիսի փոխհյուպատոս Մ. Թումանյանի հետ, որը պետք է դառնար նաև «Խաղը հանձնաժողովի» անդամ (Борьба за победу советской власти в Азербайджне 1967, 313–314, «Азербайджан» 1919, 23 октября, «Աշխատավոր» 1919, 24 հոկտեմբերի):

Այդ ընթացքում Նախիջևանում Սամեդ Բեկ Ջամալինսկին և Արազդայանի Հանրապետության զինվորական նախարար, նախկինում ռուսական և Մեծ Բրիտանիայի ծառայության գնդապետ, Նախիջևանի խաների հետնորդ և ժառանգ Քյալբ-Ալի խան Նախիջևանսկին դիմադրում են այնտեղ ժամանած գնդապետ Ջ. Ռեյին, որին միանում է նաև Մահմեդական խորհուրդը՝ հոխորտալով, թե Բաքվին էլ չեն ենթարկվի և չեն գնա ամերիկյան նահանգապետության ռիսկին: Ի վերջո 3 օր տևած անպտուղ բանակցություններից հետո, Ջ. Ռեյը հոկտեմբերի 29-ին վերադառնում է Երևան՝ Էդ. Դեյլիին թողնելով Նախիջևանում, որով վիժեցվում էր ամերիկյան նախագիծը: Ջ. Ռեյն ու Ու. Հասկելը զայրացած հայտարարում են Ադրբեջանի կողմից տրված խոստումները խախտելու մասին («Աշխատավոր» 1919, 2 նոյեմբերի, «Հայրենիք» 1919, 30 դեկտեմբերի: Великий Октябрь и борьба за Советскую власть в Азербайджае 1958, 364–370): Ադրբեջանը հանգիստ է ընդունում այս հանգամանքը, Մ. Յուսիֆ Ջաֆարովն էլ ի պատասխան հայտնում է, թե իր կառավարությունը ընդամենը հայտարարել է, որ ստանձնելու է պասսիվ դիտորդի դեր (Гаджиев 2004, 156–157: Ջոհրաբյան 2012, 215–216):

Դա Բաքվի համար հաղթանակ էր, քանզի Ն. բեկ Ուսուբբեկովի կառավարությունը լավ ըմբռնել էր, որ տարածաշրջանում Դաշնակիցների զինված ուժերի բացակայության պայմաններում կարելի է անպատիժ մնալ, ինչը գրեթե չըմբռնեցին հայկական կողմում: 1919 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին արդեն ակնհայտ էր, որ Ադրբեջանի կողմից ձախողվել է Շարուր-Նախիջևանում ամերիկյան նահանգապետության հաստատումը, որը նշանավորվեց Զանգեզուրից հայկական զորքերի դուրսբերմամբ, ինչը Ալ. Խատիսյանն անվանեց Ու. Հասկելի ծրագիրը ձախողելու պատրվակ: 1919 թ. հոկտեմբերի 6-ին Մ. Յուսիֆ Ջաֆարովը Ջ. Ուորդրոպի հետ զրույցում Անդրկովկասի քաղաքական գործերում կասկած արտահայտելով Ու. Հասկելի իրավասության մեջ՝ այդուհանդերձ համաձայնում է ներկայացուցիչ նշանակել ամերիկյան նահանգապետին Նախիջևան ուղեկցելու համար: Իր առաքելությունը ավարտված համարելով, ՈՒ. Հասկելը մեկնում է Փարիզ՝ Հ. Հուվերին զեկուցելու, օգնության շրջանակները պարզելու և իր իրավասության շրջանակները ընդարձակելու խնդրանքով, իսկ նրա փոխարեն Նախիջանում ամերիկյան նահանգապետությունը հանձնվում է ամերիկյան առաքելության շտաբի պետ, գնդապետ Ջ. Ռեյին, որը Ու. Հասկելի բացակայությամբ գերագույն հանձնակատարի պաշտոնակատարն էր:

Ու. Հասկելից դժգոհ Մեծ Բրիտանիայի արտգործքարտուղարության Արևելքի բաժանմունքի վարիչ Ջորջ Քիդստոնը ասել էր, թե Ու. Հասկելը պետք է ներկայացներ բոլոր դաշնակից պետություններին, սակայն ինքնակամ տուրք է տվել ամեն տեսակ կարգադրությունների՝ ոչնչի մասին տեղյակ չպահելով (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 240): Ջ. Քիդստոնը 1919 թ. նոյեմբերի 28-ին Քրաուի հետ զրույցում ընդգծել էր նաև, որ սկզբնապես Ու. Հասկելի նշանակումը իրենց վստահություն ներշնչեց, սակայն Անդրկովկասից եկած տեղեկությունները համադրելով, եկել են այն եզրահանգման, որ Ու. Հասկելը վերջին մարդն է, ում կարելի էր նման նուրբ և ծանր խնդիր վստահել, մեղադրելով նաև անգիտության և կամածին պարտադրանքի և Արևելքի գործերի չիմացության մեջ (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 478):

Արդյունքն այն եղավ, որ 1919 թ. նոյեմբերի 23-ին գնդապետ Ջ. Ռեյի հաշտարարությամբ ճգնաժամը հաղթահարելու միտումով Ադրբեջանի և Հայաստանի վարչապետների ստորագրությամբ ընդունվում է մի փոխզիջումային համաձայնություն, որով կողմերը պարտավորվում են բացել Զանգեզուր տանող ճանապարհները, խաղաղ բանակցություններով վերջ տալ ընդհարումներին կամ վեճը չկարգավորելու դեպքում դիմել իրավարարին: Փաստաթուղթը ուժի մեջ էր մտնում ստորագրման պահից, բայց ենթակա էր վավերացման: Յուրաքանչյուր խնդրի հիմնական և չեզոք իրավարար է ճանաչվում Ջ. Ռեյը: (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35–36: Нагорный Карабах в 1918–1923 гг. 1992, 352–353. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. 2000, 140–141): Համաձայնագրից դուրս են մնում զինաթափման, փախստականների, կիսաինքնավար անկլավների անձեռնմխելիության և Ղարաբաղի ու Շարուր-Նախիջևանի կարգավիճակի հարցերը (Հովհաննիսյան 2014, Հատոր II, 263–264):

1919 թ. դեկտեմբերի 3-ին Անդրկովկաս վերադարձած Ու. Հասկելը վրդովվում է ամերիկյան նահանգապետության ձախողումից՝ դրանում անհարկի մեղադրելով Ջ. Ռեյին, և զսպվածությունը կորցրած Ալ. Խատիսյանից պահանջում ետ կանչել հայկական զորքերը Զանգեզուրից և Ադրբեջանի նկատմամբ ավելի հաշտվողական կեցվածք ընդունել: Այդ ամենը հիմք տվեց ծովակալ Մ. Բրիստոլին քննադատելու Ու. Հասկելին, որն էլ մեղքը բարդեց Ջ. Ռեյի վրա, որը հրաժարական տվեց և խզեց իր կապերը Ամերիկյան նպաստամատույց գործակալությունների հետ («Յառաջ» 1920, 22 հունվարի: «Աշխատավոր» 1919, 18 դեկտեմբերի):

Ալ. Խատիսյանը Վաշինգտոնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գարեգին Փաստրմաջյանին (Արմեն Գարո) ուղարկված 1919 թ. նոյեմբերի 18-ի ճեպագրում գրում էր. «**Անգլիացիների գնալուց հետո մենք գտնվում ենք ամերիկացիների հովանավորության տակ, բայց այդ հովանավորությունը կրում է միայն պլատոնական բնավորություն**, որովհետև, ամերիկացիք զրկված լինելով զինվորական ուժից, ոչ մի հնարավորություն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարգադրությունները ...Շնորհիվ Հասկելի միջամտությանը արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գողթանի շրջանները պիտի կազմեին Ամերիկյան նահանգապետություն, չեզոք զոնա, մինչև վեհաժողովը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4): Լ. Եվանգուլյանը ևս

1919 թ. դեկտեմբերի 9-ին Ջ. Ուորդրոպի և Ու. Հասկելի հետ հանդիպումից որոշակի համոզման էր եկել Ու. Հասկելի անպիտանիության առումով, որը մահմեդականների հետ մերձեցման կողմնակից էր (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 125–126): Անդրկովկասում ֆրանսիական ռազմական առաքելության պաշտոնակատար էմիլ դե Նոնանկուրը դեռ հոկտեմբերի 12-ին բողոքել էր իր կառավարությանը, որ Ու. Հասկելը շատ իշխանատենչ է ու փառամոլ (Ованнисян 2007, 300):

1919 թ. դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բաժնի պետ Ալխազովը, տեղեկացնելով գնդապետ Ու. Հասկելի հետ տեղի ունեցած խորհրդակցության մասին, հայտնել էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գեներալ Ջ. Ուորդրոպի և կապիտան Ջ. Գրեյսիի միջոցով հարց է բարձրացրել բրիտանական կառավարության առաջ՝ Հայաստան ուղարկելու ռազմական հրահանգիչների: Խորհրդակցությանը Ու. Հասկելը պատրաստակամություն էր հայտնել աջակցել, Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկելով համապատասխան հայտ ներկայացնել (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 427, մաս I, թ. 28–28ա: Վիրաբյան 1999, 38), սակայն այն իրողության չվերածվեց և մնաց թղթի վրա, ինչպես և Ու. Հասկելի բազմաթիվ որոշումներ:

Ու. Հասկելի անձնավորությանը չի կարելի միանշանակ գնահատական տալ, չնայած վերջինս հավաստիացումներին իր անկողմնակալության և երբեմն էլ հայամետ դիրքորոշման մասին, սակայն իրապես նրա դիրքորոշումը որոշակի ստանդարտների չէր ենթարկվում և վերջին հաշվով իր երկրի քաղաքականության նման երկդիմի, ոչ հաստատուն էր և մեծ քաղաքական շահի վրա կառուցված, ինչի մասին է փաստում հենց Ու. Հասկելի կողմից 1919 թ. նոյեմբեր–դեկտեմբերի մի շատ ուշագրավ արտահայտությունը. «Երևանյան քաղաքագետները ամեն ինչ անում են, որպեսզի առաջ բերեն կոտորած, և նման է այն բանին, որ նրանք այն իրապես ցանկանում են, որպեսզի այդ մասին ազդարարեն ողջ աշխարհին և նոր աղմուկի հասնեն այդ ոլորտներում: Իզուր են նրանք դրա վրա շահարկում, եթե դա շարունակվի անվերջ, ապա ամբողջ աշխարհը կիմանա ճշմարտության մասին և կդադարի հավատալուց: Ինձ համար միևնույն են թաթարները և ինձ համար թանկ են հայերի շահերը, որպես Հայաստանի Գերագույն կոմիսարի, և ինձ համար ցավալի կլիներ, եթե այդ իրերի մասին իմանային» (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 146): Ինչպիսի հրաշալի դեմագոգիա, որին երբեմն հավատում էին, երբեմն էլ լրջորեն ընդունում:

Ըստ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի 1920 թ. փետրվարի 21-ի հեռագրի (N 1064)՝ անձնապես ինքն այն եզրահանգմանն էր, որ թե՛ Ջ. Ուորդրոպը, և թե՛ Ու. Հասկելը դեմ էին Ռուսաստանի Անդրկովկաս վերադառնալուն (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 123-ի շրջ: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 1–2): Լ. Եվանգուլյանը դիտարկելով «Կամավորական բանակի» հետ հարաբերությունները (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 124–124-ի շրջ), գտնում էր, որ որքան էլ վատ լինեն վերջինիս հետ գործերը, իրենք չպետք է ձեռնարկեն որևիցե ագրեսիվ բնույթի քայլ ընդդեմ Ռուսաստանի (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 3), և գալիս հետևյալ եզրահանգման. «Իմ խոսակցություններս Ու. Հասկելի և Ջ. Ուորդրոպի հետ

անձնապես այնպիսի տպավորություն են թողնում, որ նրանց կառավարությունները դեմ են Կովկասը Ռուսաստանին վերադարձնելուն: Գնդ. Հասկելը, հավաստիացրել է Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Վեքիլովին, որ Ռուսաստանը Ադրբեջանի սահմանները չի մտնի: Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Աբդուռախման բեկ Հախվերդովին Ու. Հասկելը ասել է, որ եթե հայ-ադրբեջանական կոնֆերանսը ոչ մի արդյունք չունենա, Զանգեզուրի հայկական մասը նա մտադիր է կցել Հայաստանին, իսկ Նախիջևանը՝ Ադրբեջանին» Հայաստանին պարտավորեցնելով բաց թողնել քոչվորներին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 116, թ. 125–126):

1920 թ. մայիսի 14-ին, Հայաստանում բոլշևիկյան ապստամբության ժամանակ, Ու. Հասկելը հանդես է եկել հայտարարությամբ, որ եթե ապստամբները վայր չդնեն զենքը, ապա ԱՄՆ-ը կհրաժարվի նյութական օգնություն ցույց տալ (Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281): Արտաքին գործերի նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 16-ի հեռագրում Տիգրան Բեկզադյանը տեղեկացնում էր մայիսի 13-ին գնդապետ Ու. Հասկելի հետ ունեցած հանդիպման մասին, որի ժամանակ վերջինս տագնապ էր հայտնել Ալեքսանդրապոլում բոլշևիկների կողմից ամերիկյան պահեստները գրավելու կապակցությամբ, պահանջելով վճռական լինել բոլշևիկների հանդեպ: Ի պատասխան, Տ. Բեկզադյանը վերջինիս վստահեցնում է, որ շնորհիվ ձեռնարկված կտրուկ միջոցների 2–3 օրվա ընթացքում դրությունը կհարթվի (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, թ. 125–126: Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281): Տ. Բեկզադյանը հայտնում է, որ Ու. Հասկելը հավաստիանալով Հայաստանի Հանրապետության կառավարության հակաբոլշևիկյան տրամադրվածության մեջ, միայն դրանից հետո վստահեցրել է, թե ամերիկյան կոմիտեն մթերքները Հայաստանի Հանրապետության կառավարությանը կհանձնի Բաթումում, ուստի և առաջարկվում է Բաթումում ունենալ մի անձնավորություն, որին կարելի կլինի հանձնել ապրանքները: Ի պատասխան Տ. Բեկզադյանը լիազոր ներկայացուցչի պաշտոնում առաջարկում է Եր. Տեր-Մինասյանի կամ ընդհանուր հյուպատոս Միքայել Աթաբեկյանի թեկնածությունը: Առաջարկվում է նաև կապի ծառայության սպա պորուչիկ Բեկզադյանին որպես ռազմական կցորդ ուղարկել Բաթում՝ Ու. Հասկելի մոտ (ՀԱԱ, ֆ. 275. ց. 5, գ. 212, թ. 80):

1920 թ. մայիսյան իրադարձությունները ճակատագրական էին Ու. Հասկելի անդրկովկասյան գործունեությունում, որի ժամանակ նա հրամայում է Երևանի նպաստամատույցի իր աշխատակիցներին թողնել երկիրը, իսկ ինքը Բաթումով արագ դուրս է գալիս, որի մասին մայիսի 3-ի փոխգնդապետ Զ. Լիվինգսթոնը տեղեկացնում է վարչապետ Համո Օհանջանյանին, ասելով, որ ինքը հրաման է ստացել տարհանելու ամբողջ զինվորական անձնակազմը: Հապճեպ հեռացման պահին «մարդասեր» Ու. Հասկելը կարգադրել էր կասեցնել ամերիկյան հացահատիկի բեռնափոխադրումները և Բաթում ուղարկվելիք բեռները վերահասցեագրել Եվրոպայում այլ նավահանգիստներ (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 64: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 52): Ու. Հասկելի փախուստը առաջացրեց Թիֆլիսում դաշնակիցների բացասական վերաբերմունքը: Հ. Լյուկը տեղեկացրել էր, որ այդ մասին իրենք իմացել են Ու. Հասկելի մեկնումից երկու ժամ առաջ, որ այն առաջ է բերել «մեղմ»

խուճապ և ամոթի զգացում: Ֆրանսիացի Շ. Մ. դը Նոնանկուրի կարծիքով Ու. Հասկելն ու ամերիկացի շատ այլ սպաներ Անդրկովկասում իրենց պահել են կոպիտ, անշրջահայաց և որ Ու. Հասկելն անձնապես հակակրելի էր դարձել հայերի համար՝ մեղադրելով նրան երկրի ու նրա բնակիչների մասին բացարձակ և համառ տգիտության մեջ (Հովհաննիսյան 2015, Հատոր III, 302): Քրիստոֆեր Ուոլքերը Ու. Հասկելին ներկայացնում է որպես խաբեբա և հափշտակիչ. «1920 թ. մայիսի 5-ին, երբ Կովկասը ցնցված էր Անդրկովկասում բոլշևիկյան հեղաշրջման ու Հայաստանում ապստամբության առաջ բերած անորոշությունից, Հասկելը ծանուցում ստացավ այն մասին, որ ֆինանսական հետաքննող հանձնաժողովը ճանապարհ է ընկել ստուգող տեսուչների հետ միասին: Կայծակնային արագությամբ նա և նրա աշխատակազմը փախչում են Թիֆլիսից: Նրա արդարացումը բոլշևիզմի տարածման նկատմամբ ունեցած իր մտահոգությունն էր: Հասկելը հրաման արձակեց, որ գրառումները պետք է ոչնչացվեն: Նմանատիպ հրաման ստացավ նրա աշխատակազմը Երևանում» (Walker 1980, 287): Մայիսյան ապստամբությունը ճնշումից հետո Ու. Հասկելը հանձնարարում է կատարել Հայաստանի համար նախատեսված բեռնափոխադրման վերջին առաքումը: Հ. Օհանջանյանի հետ մի քանի ջերմ հաղորդագրություններից հետո 1920 թ. հունիսի վերջին նա դուրս է գալիս Բաթումից ՝ այլևս երբեք չվերադառնալու համար: Գնդապետ Չարլզ Թելֆորդը ամերիկյան և դաշնակից պետությունների կազմակերպած օգնությունը դնում է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի մասնավոր հովանու ներքո (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 52–53: Նույնի՝ գ. 442, մաս II, թ. 553–554: «Յառաջ» 1920, 3 օգոստոսի):

Սակայն այդ ամենը չխոչընդոտեց, որպեսզի հայկական կողմը որոշակի թուլակամություն դրսևորեր՝ թանկարժեք նվեր մատուցելով Ու. Հասկելին: Եվ այսպես, 1920 թ. օգոստոսի 4-ին (N 0289) Թիֆլիսում Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանին ուղղված պաշտոնագրում Հայկական բանակի Գլխավոր շտաբի պետ Նիկոլայ Բաղդասարովը անհրաժեշտ էր գտնում, որ դիվանագիտական հավատարմատարը Տ. Բեկզադյանի միջոցով ձեռնարկի գնդապետ Ու. Հասկելի համար կովկասյան սուր գնելու գործը՝ ի հիշատակ և շնորհակալություն ժողովրդի փրկության գործում նրա կողմից ցուցաբերված օգնության: Գրության մեջ խնդրվում էր գնել ամենալավ սուրը՝ չնեղվելով գնից, անելով նաև դրա վրա մակագրություն (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 10 -12):

Ու. Հասկելը, հրաժարական տալով Գերագույն հանձնակատարի իր պաշտոնին և Անդրկովկասը լքելով 1920 թ. օգոստոսի 1-ին, սեպտեմբերին ներկայանում է արտաքին գործերի նախարարություն, որտեղ նա հայերին որակում է որպես ապերախտների ու պրոֆեսիոնալ մուրացկանների (Հովհաննիսյան Հատոր III, 303), որոնք բացարձակապես անպատիվ են, անընդունակ օգնելու իրենք իրենց, բացարձակապես չունեն երախտագիտության և հայրենասիրության զգացում, չունեն վարչական կամ քաղաքական կարողություններ, ոչ էլ փող ու զարգացման ռեսուրսներ: Հենց դրանով էլ ավարտվում է ԱՄՆ-ի օգնության պետական ծրագիրը, իսկ Մերձավոր Արևելքում օգնության Կովկասյան ճյուղի նոր Գլխավոր դիրեկ-

տոր է դառնում հայտնի միսիոներ, Վանի ինքնապաշտպանության և Արևմտահայերի I համագումարի մասնակից Է. Յարրոուն, որն իր նստավայրը Թիֆլիսից փոխադրում է Ալեքսանդրապոլ (Махмурян 2015: «Գիտական աշխատություններ», 108–109):

1920 թ. օգոստոսի 6-ին (N 2752) Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը դիմելով Վրաստանի ներքին գործերի նախարարին, հայտնում էր, որ Ու. Հասկելից ստացված հաղորդագրությամբ իրենք թողնում են Անդրկովկասը՝ ետ կանչելով Բորչալուի գավառի «Չեզոք գոտու» գեներալ-նահանգապետին՝ Վրաստանի և Հայաստանի կառավարություններին առաջարկելով պայմանավորվել հետագա կառավարման հարցերում: Ըստ այդմ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից առաջարկվում էր անհապաղ քննարկել գոտու պատկանելության հարցը և շտապ ներկայացնել սեփական նկատառումները՝ բանակցելու համար (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 100, 117):

Առհասարակ պետք է նկատել, որ դաշնակիցների ներկայացուցիչներն Անդրկովկասում և Հայաստանում երբեմն հասարակայնության վրա չափազանց ճնշող տպավորություն էին թողնում, որի մասին չափազանց խոսուն փաստ կա Ս. Վրացյանի մոտ՝ կապված գնդապետ Ու. Հասկելի Անդրկովկասից հեռանալու հետ. «Հասկելի գործունեության շուրջ աղմուկ շատ էր բարձրանում, բայց ստացուած արդիւնքը աննշան էր… ճանապարհին, Տրապիզոնի մոտ, Հասկելի նավի վրա (Հասկելը Երևան եկավ 1919 թ. օգ. 21-ին) յարձակուեցին մի խումբ քօղածածուկ ավազակներ և Հասկելի կնօջից խլեցին մի տոպրակ ադամանդ և ուրիշ թանկագին քարեր, որ տիկին Հասկելը հաւաքել էր իր ամու սնոյն ուղեկցելիս և այժմ տանում էր Ամերիկա: Ասում էին, որ վրացիներն էին կազմակերպել այդ գործը, ինչը որ շատ հեռու չէր իրականութիւնից» (Վրացեան 1966, Հատոր Ե, 63, 65):

ԱՄՆ մեկնումից առաջ գերագույն կոմիսար Ու. Հասկելը, Հայաստանի Հանրապետության կառավարությանը հրաժեշտ տալով, ուրախություն արտահայտեց հայ ժողովրդի հաջողությունների առթիվ՝ բանակի օգտին նվիրաբերելով 15 հազար դոլար և հույս հայտնեց, որ ուղղված օգնությունն ի չիք չի դառնա՝ հաշվի առնելով հայ ժողովրդի դիմացկունությունը և ապրելու ձգտումը (Туманян 2012, 323):

Այսպիսով, «Մարդասեր» Ու. Հասկելն իր ադրբեջանամետ դիրքորոշմամբ ձախողեց Ղարաբաղ-Արցախի, Նախիջևանի և այլ վիճելի հարցերում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական շահերի իրականացումը, նպաստեց Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում, այնպես, ինչպես և նրա բրիտանացի գործընկերները: Այդ քաղաքականությունը ի վերջո հանգեցրեց Հայաստանի Հանրապետության անկմանը, իսկ Ու. Հասկելն էլ հապճեպ լքեց Հայաստանը, որտեղ նա այլևս ասելիք չուներ և ըստ էության անելու բան էլ չուներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային նյութեր

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 64:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1–3, 7–8:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 85–86:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35–36:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 14–15:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 304, մաս 1, թ. 13:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 81, 99:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 370, թ. 1 – 1-ի շրջ.:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 52–53:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 1–3:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս II, թ. 553–554:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 638, թ. 1–2,
ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 427, մաս I, թ. 28–28ա:
ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 133, թ. 26–27.
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 11, թ. 19–24, 46, 46-ի շրջ., 47, 47շրջ., 51.
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 90-ի շրջ.:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 10–12:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 123–126:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 210:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 146:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 193, թ. 2, 25.
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 196, թ. 38:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 197, թ. 34:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 100, 117:
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 222:
ՀԱԱ, ֆ. 275. ց. 5, գ. 212, թ. 80, 85;
ՀԱԱ, ֆ. քաղվ., գ. 139, թ. 31–32:
Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 40:

Պարբերական մամուլ

«Աշխատավոր» թերթ, Թիֆլիս, 24 հոկտեմբերի 1919 թ.:
«Աշխատավոր» թերթ, Թիֆլիս, 2 նոյեմբերի 1919 թ.:
«Աշխատավոր» թերթ, Թիֆլիս, 18 դեկտեմբերի 1919 թ.:
«Հայրենիք» թերթ, Բոստոն, 2 հոկտեմբերի, 1919 թ.:
«Հայրենիք» թերթ, Բոստոն, 21 հոկտեմբերի, 1919 թ.:
«Հայրենիք» թերթ, Բոստոն, 23 նոյեմբերի, Բոստոն, 1919 թ.:
«Հայրենիք» թերթ, Բոստոն, 30 դեկտեմբերի, Բոստոն, 1919 թ.::
«Յառաջ» թերթ, Երևան, 7 հոկտեմբերի, 1919 թ.:

«Յառաջ» թերթ, Երևան, 8 հոկտեմբերի, 1919 թ.:
«Յառաջ» թերթ, Երևան, 21 հոկտեմբերի, 1919 թ.:
«Յառաջ» թերթ, Երևան, 22 հոկտեմբերի, 1919 թ.:
«Յառաջ» թերթ, Երևան, 22 յունուարի, Երևան, 1920 թ.:
«Յառաջ» թերթ, Երևան, 3 օգոստոսի, 1920 թ.:
«Նոր աշխատավոր» թերթ, Թիֆլիս 16 օգոստոսի, 1919 թ.:
«Նոր աշխատավոր» թերթ, Թիֆլիս 16 օգոստոսի, 1919 թ.:
«Նոր աշխատավոր» թերթ, Թիֆլիս 27 օգոստոսի, 1919 թ.:
«Նոր աշխատավոր» թերթ, Թիֆլիս 1 սեպտեմբերի, 1919 թ.:
«Նոր աշխատավոր», Թիֆլիս 10 սեպտեմբերի, 1919 թ.:
«Նոր աշխատավոր» թերթ, Թիֆլիս 11 սեպտեմբերի, 1919 թ.:
Газета «Азербайджан», Баку, 30 августа 1919 г.
Газета «Азербайджан», Баку, 31 августа 1919 г.
Газета «Азербайджан», Баку, 5 сентября 1919 г.
Газета «Азербайджан», Баку, 23 октября 1919 г.,
Газета «Борьба», Тифлис, 16 августа, 1919 г.
Газета «Борьба», Тифлис, 17 августа, 1919 г.
Газета «Борьба», Тифлис, 21 августа, 1919 г.
Газета «Борьба», Тифлис, 28 августа, 1919 г.
Газета «Борьба», Тифлис, 2 сентября, 1919 г.

Հրատարակված փաստաթղթերի ժողովածուներ

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ», – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1 (95)–2 (96), էջ 116–119:

ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1920 – Ադրբեջանի դավադրական գործունեության մի էջ, Երևան, 1920:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1918–1920 ԹԹ. (քաղաքական պատմություն), 2000 – Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), Երևան, 2000:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 1918–1920 ԹԹ., 2009 – «Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918–1920 թթ., գլխ. խմբ. և կազմ. Ա. Վիրաբյան: Երևան, 2009:

АРМЕНИЯ В ДОКУМЕНТАХ ГОСУДАРСТВЕННОГО ДЕПАРТАМЕНТА США 1917–1920 ГГ. 2012 – Армения в документах Государственного департамента США 1917 -1920 гг., Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян, Ред. В. Казахецян, Изд. 2-е, доп., Ереван, 2012.

БОРЬБА ЗА ПОБЕДУ СОВЕТСКОЙ ВАСТИ В АЗЕРБАЙДЖНЕ 1967 – Борьба за победу советской власти в Азербайджане. Документы и материалы, Инст. Истории партиии ЦК КП Азербайджана, Баку, 1967.

ВЕЛИКИЙ ОКТЯБРЬ И БОРЬБА ЗА СОВЕТСКУЮ ВЛАСТЬ В АЗЕРБАЙДЖАНЕ 1958 – Великий Октябрь и борьба за советскую власть в Азербайджане. под. Ред. И. А. Гуссейнова и др., Сборник документов, материалов и статей, Изд-во АН Азерб.ССР, Баку, 1958.

НАГОРНЫЙ КАРАБАХ В 1918–1923 ГГ. 1992 – Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов. Под ред. В. А. Микаеляна, Ереван, АН Армении, 1992.

Գրականություն

ՋՈՀՐԱԲՅԱՆ Էդ. 2012 – Ջոհրաբյան Էդ., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտ.–1920 թ. ապրիլ), Երևան, 2012:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ. ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ 1996 – Հայկական հարց. Հանրագիտարան Երևան, 1996:

168.AM, 30 ՕԳՈՍՏՈՍԻ – Հարությունյան Ավ. 2021, Ինչո՞ւ են Թուրքիան և Ադրբեջանը ցանկանում Սյունիքով միջանցք բացել: 168.am, 30 գոստոսի: (2.09.2021)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա., ԲԱԼՅԱՆ Ա. 2021 – Հարությունյան Ա., Բալյան Ա., 1919 թ. օգոստոսի 29-ի Հասկել-Ուսուպբեգով «Զեզոք գոտի» խայտառակ համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետությունը, «Հայագիտության հարցեր» Հանդես, Երևան, 2021 N 3 (24), էջ 59–72:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ. 2005 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, 1918–1919, Երևան, 2005:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ. 2014 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր II, Վերսալից–Լոնդոն, 1919–1920, Երևան, 2014:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ. 2015 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր III, Լոնդոնից–Սևր, փետրվար–օգոստոս, 1920, Երևան, 2015:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ. 2016 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր IV, Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Երևան, 2016:

ՌՈՒԲԷՆ 1982 – Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. Հատոր. Գ, Արտասահման, Սասուն և Հայաստանի Հանրապետութիւն, Հրատարակութիւն, Թեհրան, 1982:

ՎԻՐԱԲՅԱՆ Վ. 1999 – ՎԻՐԱԲՅԱՆ Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը 1918–1920 թթ., Երևան, 1999:

ՎՐԱՑԵԱՆ Ս. 1928 – Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928:

ՎՐԱՑԵԱՆ Ս. 1966 – Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Հատոր Ե, Պէյրութ, 1966:

ՎՐԱՑՅԱՆ Ս. 1993 – Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

ГАДЖИЕВ А. 2004 – Гаджиев А., Демократические республики Юго-Западного Кавказа (Карсская и Араз-Тюркская Республики), Баку, 2004.

ДЕНИКИН А. И. 2002 – Деникин А. И., Очерки русской смуты. Вооруженные силы Юга России. Распад Российской империи. Октябрь 1918-январь 1919, Том 4, Минск, 2002.

ИСМАИЛОВ Э. Р. 2010 – Исмаилов Э. Р., Очерки по истории Азербайджана, Москва, 2010.

МАХМУРЯН Г. 2016 – Махмурян Г., Александрополь 1918–1920 гг. в документах Госдепартамента США И Национального Архива Армении, «Գիտական աշխատություններ», Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2016, Հատոր XIX, էջ 104–112:

МАХМУРЯН Г. 2017 – Махмурян Г., Организационная, гуманитарная и политическая деятельность верховного комиссара союзников В. Гаскеля в Армении в 1919 г., «Հայոց պատմության հարցեր» Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հատոր 18, էջ 49–75:

НАДЖАФОВ Б. 1994 – Наджафов Б., Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX–начале XX века. Часть II, Баку, 1994.

ОВАННИСЯН Р. 2007 – Ованнисян Р., Межгународные отношения Республики Армения 1918–1920 гг., Пер. с англ. Г. Махмуряна, Ереван, 2007.

ОГАНЯН Д. 2010 – Оганян Д., Стереотипы армянской историографии, Ереван, 2010. (http://bs-kavkaz.org/2011/11/verhovnyj-komissar-antanty-i-usa-v-armenii-polkovnik-gaskel).

ТУМАНЯН М. 2012 – Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1919–1920 гг., Ереван, 2012.

WALKER 1980 – Walker Ch., Armenia. The Survival of a Nation, New-York, 1980

Vanik Virabyan
Doctor of Sciences in History, Professor

Armenian State Pedagogical University After Khachatur Abovyan
vanik.virabyan@mail.ru

THE MISSION AMERICAN COLONEL WILLIAM HASKEL IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE TRANSCAUCASUS IN 1919–1920

Keywords: Republic of Armenia, allies, Entente, High Commissioner-Commissar, W. Haskel, territorial boundary, neutral zone.

American Colonel V. Gaskel from July 5, 1919 to August 17, 1920 was the High Commissioner of the Allies in the Transcaucasus and in the Republic of Armenia. The main concept for him was "divide and rule," it is easy to make promises that will never be fulfilled, which clarifies the strategy of the American Colonel Gaskell, that he is just an obedient instrument of expressing the will of his government and the executor of his intentions, for which the Armenians should be are grateful to the "pro-Armenian" W. Wilson.

Colonel Haskel, who is considered a supporter of the interests of Azerbaijan, with his pro-Azerbaijani position, could not realize the urgent foreign policy interests of Armenia – Karabakh-Artsakh, Nakhchivan and other controversial issues of territorial delimitation, contributed to the strengthening of Azerbaijan's position in the region, which ultimately led to the fall of the Republic of Armenia, and as a result Haskel hurriedly left Armenia, where he had nothing else to do.

Ваник Вирабян
Доктор исторических наук, Профессор

Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
vanik.virabyan@mail.ru

МИССИЯ АМЕРИКАНСКОГО ПОЛКОВНИКА ВИЛЬЯМА ГАСКЕЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ЗАКАВКАЗЬЕ В 1919–1920 ГГ.

Ключевые слова: Республика Армения, союзники, Антанта, Верховный комиссар, В. Гаскель, территориальное разграничение, нейтральная зона.

Американский полковник В. Гаскель с 5 июля 1919 по 17 августа 1920 г. года был Верховным комиссаром союзников в Закавказье и в Республике Армения. Главным понятием для него было «разделяй и властвуй», легко давать обещания, которые никогда не будут выполнены. Что проясняет стратегию американского полковника Гаскеля, то что он всего лишь был послушным инструментом выражения воли своего правительства и исполнителем его намерений, за что армяне должны быть благодарны «проармянски настроенному» В. Вилсону.

Полковник Гаскель, считающийся сторонником интересов Азербайджана, своей проазербайджанской позицией, не смог реализовать насущные внешнеполитические интересы Армении-Карабах-Арцах, Нахчыван и других спорных вопросов территориального размежевания, способствовал укреплению позиций Азербайджана в регионе, что в итоге привело к падению Республик Армения, и итоге Гаскель поспешно покинул Армению, где ему больше нечего было делать.